



ՄՈՒՇԵՂ ՍԱՐԿԱՎԱԳ ԺՈՌՈՅԱՆ

ՄՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԸ ԵՎ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆԵՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՅ ԵԿԵՂԵՅՈՒ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԵԶ*

ՄՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ԾԱԳՈՒՄԸ

Տեր Աստված է Սինա լեռան վրա Մովսես մարգարեին հայտնել Մյուռոնի բաղադրության, պատրաստման և կիրառության ոլորտների մասին. «Տէրը խօսեց Մովսէսի հետ ու ասաց... Դրանցից կը պատրաստես սուրբ օծութեան համար իւղ այնպէս, ինչպէս վարպետ իւղագործները ձէք են պատրաստում: Այն սուրբ օծութեան համար իւղ թող լինի: Դրանով կ'օծես վկայութեան խորանը, վկայութեան տապանակը, գոհասեղանն ու նրա ամբողջ սպասքը, աշտանակն ու նրա ամբողջ սպասքը, խնկարկութեան սեղանը, ողջակէլների սեղանն ու նրա ամբողջ սպասքը, աւազանն ու նրա պատուանդանը: Կը սրբագործես դրանք, եւ դրանք կը լինեն սրբութիւնների սրբութիւն: Ամէն ոք, որ դիպչի դրան, կը մաքրուի: Կ'օծես Սհարոնին ու նրա որդիներին, կը սրբագործես նրանց, որպէսզի նրանք ինձ համար քահանայութիւն անեն»¹:

Հին Ուխտում օծման այս անուշաբույր յուղը նկատվում էր իբրև ամեն յոյժեղէն միջնորդը, որը Սուրբ Հոգու շնորհները և գործությունը տեսանելի է դարձնում մարդկանց մէջ և իրերի վրա: Մաղաքիս արքեպիսկոպոս Օրմանյանի բնորոշմամբ «Իսկ ս. Մյուռոնը թէև ըստ-

* Այս աշխատանքը առանձին գրույկով լույս է տեսել Ս. Մյուռոնի օրհնությունից առաջ:

¹ Աստվածաշունչ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ Լ 22, 25-30:

ինքեան պաշտելի նիւթ չէ, բայց նուիրական միջնորդ եւ հաստատուն նշանակ մըն է, որով հասարակ իրաց կարգէն եւ մարմնաւոր տարապով եւ նիւթով եղած բան մը կը վանազանուի կիրառութեամբ եւ նշանակութեամբ եւ յատկապէս կ'որոշուի հոգեւոր նշանակութեամբ, կիրառութեամբ եւ գործածութեամբ: Ու ասիկա շատ ալ պատշաճ բան մըն է, զի ինչպէս պաշտամունքին պաշտօնեան կ'օգնուի, նոյնպէս եւ պէտք է օծուին պաշտամունքին գործիք եղած առարկաներն ու սպասները»²: Այլ կերպ ասած, նրանով օծված պաշտամունքի առարկաներն ու մարդիկ վանազանվում էին շրջապատի կենցաղային իրերից ու մարդկանցից, քանզի աստվածային գործությամբ նրանց հաղորդվում էր սրբական ու նվիրական բնույթ, ինչն իրենք իրենց մեջ ունենալ չէին կարող:

Հին Ուխտում, սակայն, այս յուղով օծվելու արժանանում էին միմիայն ընտրյալ մարդիկ՝ քահանաները, մարգարէները և թագավորները, որոնք կոչվում էին Աստծո օծյալներ և նրա ներկայացուցիչներն էին երկրի վրա: Օծության ժամանակ այս առանձնաշնորհյալ անձանց վրա Սուրբ Հոգին էր իջնում: Այսպես, երբ Սամուել մարգարէն օծեց Իսրայելի Դավիթ թագավորին, Սուրբ Գրքի վկայությամբ, նրա վրա Սուրբ Հոգի իջավ:

Այս կանաչաթուր ու բուրումնավետ հեղուկը խստագույնս արգելված էր կիրառել հոգևոր անդաստանից դուրս:

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԸ ԲՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեր Տեր Հիսուս Բրիստոսով Մյուռոնը Ուսրօս հունարեն բառ է և նշանակում է անուշաբույր յուղ, առավելապես՝ ձիթապտղի կամ անուշահոտ համեմունքներով վանգված յուղ) մի նոր խորհուրդ ստացավ: Բրիստոնեական վարդապետության խորունկ ըմբռնմամբ, այն խորհուրդ է «խորին» ու խորհրդավոր: «Միւռոնը ձէ'ք է ու ծաղիկ' իբրեւ նիւթեղէն գոյութիւն: Բայց մեզի համար կը փոխակերպուի խորհուրդի', իմաստի' ու կեանքի', երբ կը հանդիպի մեր հաւատքի հրաշակերպող հոսանքին եւ ազգային գիտակցութեան ներգորկրակին»³: Մեր Տեր Հիսուս Բրիստոսի փրկչական առաքելության վրա է խարսխված Մյուռոնի խորախորհուրդ էությունը, ինչը հասու և տեսանելի է մեզ միայն հոգևոր իմացությամբ՝ հավատքի աչքերով:

Նրա աստվածաբանական իմաստը ամփոփվում է ներկայացված է սրբալույս Մյուռոնի օրհնության եպիսկոպոսական աղոթքում. «Ով հայրերի Աստված և Տեր ողորմության, Դու մեզ ստեղծեցիր կյանքի և անապականության համար, սակայն, մենք բանասերկուի պատրանքների պատճառով խախտեցինք քո պատվիրանները, դատապարտվեցինք մեղքի ծառայության ու մահվան: Բայց Դու, գթալով Բո ձեռագործ արարածներին, բարեհաճ գտնվեցիր մեզ մահվանից կյանքի կոչելու և մեղքի ծառայությունից՝ շնորհքի ազատության՝ Բո Միածին Որդու, մեր Տիրոջ՝ Հիսուս Բրիստոսի միջոցով, որ այս անպատում բաներն ու քահանայագործության սքանչելի խորհուրդը մեզ ավան-

² Մաղաքիա արք. Օրմանեան, «Ցաղագս պաշտամանց», Գաճաաթ Գ, էջ 35:

³ Գարեգին Բ Կաթողիկոս, Հոդ. մարդ եւ գիր. Անթիլիաս, 1991, էջ 167:

դեց. որ մեր մեղքերի ծանրությունը ինքն իսկ բառնաց՝ մեզ հրավիրելով երկնային խորհրդականության, և վերադարձնելով մեզ՝ ջրով և հոգով փրկության ճանապարհի պատրաստեց:

Արդ՝ Դու՝ նույն ինքդ Տեր մեր Աստված, խոնարհվելով դեպի Քո ծառաների աղաչանքները՝ առաքիր Քո առատ ողորմությունը այս ժիթենու պտղի մեջ, որ մարդկային ազգի փրկության ու օգտակարության համար տվեցիր, և բնակեցրո՛ւ մեր մեջ Սուրբ ու Բարեբար Հոգուդ շնորհները՝ ի գործակցություն և ի լրումն քո սուրբ խորհուրդների և տարբեր պաշտամունքների, որոնք մատուցում ենք ի փառս Քո»⁴:

Աստծո փառքից ընկած ու դրախտից վտարված մարդկությունը, որ դատապարտված էր տառապանքի ու մահվան, Քրիստոսով մեղքերի թողություն ու Սուրբ Հոգու պորացուցիչ շնորհները կրելու կարողությունը ստացավ. «Եւ նա, որ հաստատեց մեզ ի Քրիստոս մեզ հետ միապին եւ օծեց մեզ, Աստուած է, որ եւ կնքեց մեզ եւ Հոգու առհաւատչեան տուեց մեր սրտերի մեջ»⁵:

Քրիստոսն ինքն է ճշմարիտ Մյուռոնը, որն իր աստվածության յուղը հեղեց մեր մեղանչական բնության մեջ, օծեց և սրբացրեց մեզ: Տերն իր փրկագործությունը մարդկությանը շնորհեց իր եկեղեցու խորհուրդների միջոցով: Դրանցից երկու կարևորագույնների՝ մկրտության ընթացքում, մենք ջրով սրբվում ենք աղամական կամ սկզբնական մեղքից ու վերստին ծնվում (Տիտոս, Գ 5), իսկ դրոշմի խորհրդականության ժամանակ, որի զգալի նշանակը՝ նյութը, հենց սրբալույս Մյուռոնն է, արծանանում ենք Սուրբ Հոգու բարեբար ու սրբարար ներգործությանը: Դրոշմի խորհուրդը, առհասարակ, եկեղեցու սուրբ Հայրերի գրվածքներում ունի բազում անվանումներ՝ խորհուրդ մյուռոնի, խորհուրդ յուղի, խորհուրդ Ս. Հոգու և այլն: Հունաց եկեղեցում այն պարզապես կոչվում է Մյուռոն, իսկ մեկանում գործածվող դրոշմ բառը նրա ակնարկությունն է: «Թէպէտեւ ինչպէս այժմ բոլոր եկեղեցիները ունին եւ ինչպէս կուսուցանեն բոլոր եկեղեցիներուն վարդապետութիւնները, ներկայիս չկայ Դրոշմ առանց Միւռոնի, եւ ոչ իսկ ընդունելի կ'ըլլայ խորհուրդը առանց օծումի»:

Այս երկու խորհուրդները, իրենց նախահիմքում ունենալով Հիսուս Քրիստոսի մկրտությունը Հորդանան գետում և Սուրբ Հոգու էջքը Նրա վրա, մի ծեսի անքակտելի մասերն են և ժողովրդի մեջ հայտնի են կնունք անվամբ: Այս բառը ծագում է «Սուրբ Հոգու կնիք» արտահայտությունից, որով դրոշմվում է յուրաքանչյուր մկրտված: Եռամեծար Սուրբ Գրիգոր Տաթևացի Ս. Մյուռոնով օծվելու կապակցությամբ գրում է. «Չայն ցուցանէ թէ յորժամ մկրտեցաւ Քրիստոս՝ Հոգին Սուրբ էջ ի վերա նորա. պի էառ որպէս գլուխ մեր, և եհեղ յանդամս ի հաւատացեալս իւր, ըստ այնմ (որպէս իւղ պի իբանէ ի գլուխ) ... Այսպէս ջրովն մկրտիմք ի Քրիստոս և որդիք Աստուծոյ կոչիմք, և իւղովն ի շնորհք Հոգւոյն Սրբոյ միաւորիմք»⁶:

⁴ «Կանոն օրհնութեան սրբալույս մեռոնի», Վաղարշապատ, 1890, էջ 9:

⁵ Բ Կորնթ. Ա 21-22:

⁶ Գր. Տաթևացի, Գիրք Հարցմանց, Երուսաղեմ, 1993, էջ 593:

Սուրբ Հոգու շնորհներով մենք որդեգրվում ենք Աստծուն, դառնում Աստծո արքայության ժառանգորդ և եկեղեցու պափակ: Այլ կերպ ասած, ի Քրիստոս կնքվելով մենք դառնում ենք քրիստոնյաներ, այսինքն՝ օծվածներ:

Անուշահոտ յուղի օծության ժամանակ, Քրիստոս այս «հիւք օրհնութեան ձիթոյ»-ով, որին միավորվում է Սուրբ Երորդորությունը, մեզ լինում է «...ճառագայթ հոգւոց, լուսաւորութիւն մտաց, տեսառագրութիւն երեսաց, պաշտպան ջրօանց, զօրութիւն անձանց, ախոյեան բնդ դէմ դիւաց, փարատիչ ցաւոց, պահպանումն կուսից, աճեցումն տղայոց, պարարումն ծերոց, ձեռնադրիչ նուիրելոց, և պսակ թագաւորաց: Բանկի մեռոնս այս օրհնաբանեայ՝ հրաշագործէ արուեստս և սքանչելիս, և զօրութիւնս պարմանաւորս»⁷:

ՄՅՈՒՌՈՒՆԸ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՅՈՒՄ

Սուրբ Լուսավորչի ձեռամբ օրհնված և Ս. Էջմիածնից դարեր շարունակ բխող այս աստվածային խնկելի յուղը, որ մեր պաշտամունքի սրբությունների շարքում ամենանվիրականն է, միշտ գերադաս ու առանձնահատուկ պատիվ է ունեցել մեզանում: «Միոռոնը հայոց պատմութեան մէջ քացադիկ յարգանքի է արժանացած սրբական, սրբարար խորհրդանիշի այս էական հանգամանքին հետ միասին նաեւ այն մասնաւոր հանգամանքին համար, որ ազգային բնոյթ ունի: Հայց. եկեղեցւոյ միոռոնը հայութեան կնի՛քն է դարձած՝ ըլլալէ ետք կնիքը Ս. Հոգւոյն: Միոռոնով պայծառացած ճակատին համար կ'ըսենք. «հայր'ւ ճակատ». միոռոնութեամբ մանուկի համար կ'ըսենք. «հայր'ւ որդի». երբ մկրտութենէն անմիջապէս ետք երեխան դրոշմի օծումն ընդունի իր ճակտին՝ կ'ըսենք. «ահա հիմա հայացաւ»⁸:

Մեր յույս հավատքը Հայոց աշխարհում Քրիստոսի՝ Արդարության Արեգակի լուսարձակած առաջին իսկ սրբագործող ու փրկագործող ճառագայթների հետ միասին դրոշմվել ու ներծծվել է այս Սուրբ Միոռոնի անուշահոտությամբ: Ազաթագեղոսի վկայությամբ, մեր առաջին հայրապետը մկրտությունից հետո բոլորին օծեց սրբության յուղով. «Իւղն օծութեան զոր արկանէր Գիրգոր ի վերայ մարդկանն, շրջան առնայ ի մէջ գետոյն՝ շուրջ զմարդկամբն խաղայր»⁹:

Դրոշմի խորհուրդը մեր եկեղեցում կատարվում է հատուկ բանաձևերի արտասանությամբ: Սուրբ Հոգու շնորհները բաշխվում են մկրտյալին՝ նրա մարմնի մասերը ինն անգամ օծելով:

Բահանան Սուրբ յուղով նախ օծում է ճակատն՝ ասելով.

«Քրիստոսի անունով քեզ վրայ հեղուած անուշ Իւղը երկնաւոր պարգեւների կնիք է»:

Այս աչքերը.

«Քրիստոսի անունով այս կնիքը թող լուսաւորի աչքերդ, որպէսզի երբէք չննջես մահով»:

⁷ «Կանոն օրհնութեան սրբալոյս մեռոնին», Վաղարշապատ, 1890, էջ 28:

⁸ Գարեգին Բ Կաթողիկոս, Հօղ, մարդ եւ գիր, Ամթիլիաս, 1991, էջ 170:

⁹ «Էջմիածին», 1955, Ը, էջ 20:

Եւ ականջները.

«Այս սուրբ օծումը թող լինի քեզ յսելութիւն աստուածային պատուիրաններին»:

Հոտոտելիքը.

«Քրիստոսի այս կնիքը թող լինի քեզ անուշահոտութիւն կեանքից կեանք»:

Բերանը՝ ասելով.

«Այս կնիքը թող լինի քեզ պահպանութիւն եւ ամուր դուռ քո ջուրթերին»:

Ձեռքերը՝ կից պահած.

«Քրիստոսի այս կնիքը թող լինի քեզ պատճառ բարեգործութեան, առաքինի գործերի եւ վարքի»:

Սիրտը.

«Աստուածային սրբութեան այս կնիքը թող սուրբ սիրտ հաստատի քո մէջ եւ ուղիղ հոգի նորոգի քո ներսում»:

Մէջքը.

«Քրիստոսի անունով այս կնիքը թող լինի քեզ ամբութեան վահան, որով կարողանաս չարի թլուր այրող նետերը հանգցնել»:

Եւ ուղքերը.

«Այս աստուածային կնիքը թող ուղղի քո ընթացքը դէպի յաւիտենական կեանք»¹⁰:

Այս սուրբ յուղով են օծվում նաև եկեղեցու սպասավորները՝ քահանան (աբեղան), եպիսկոպոսը և կաթողիկոսը՝ ի կառավարումն եկեղեցու և ի կատարումն սրբապան արարողությունների: Եպիսկոպոսը քահանայի ձեռնադրության ժամանակ օծում է վերջինիս ճակատն ու ձեռքը: Այս օծումը, այն էլ մասամբ, կիրառում են միայն կաթոլիկները: Եպիսկոպոսներին օծում է կաթողիկոսը, իսկ վերջինիս՝ տասներկու եպիսկոպոսներ: Հայրապետի օծումը եպակի երկույթ է և բնորոշ է միայն Հայ Առաքելական Եկեղեցուն: Հայրապետի՝ որպես Եկեղեցու գլխի ու Փրկչի փոխանորդությամբ Նրա հոտի միության պահպանողի գազափն է օծվում: Հնում մեղանում, ինչպես այսօր Օրթոդոքս Եկեղեցում, օծվել են թագավորները (համենայն դեպս Բագրատունիների ժամանակաշրջանում), իբրև Աստծո օրենքն ու իշխանությունը երկրի վրա գործադրողներ¹¹:

Մեր եկեղեցում, ինչպես և Հին Ուխտում, օծության յուղով օծվում են աստվածապաշտության մեջ՝ կիրառվող սպասքը, պաշտամունքային կառույցներն ու առարկաները՝ եկեղեցին, ավապանը, խաչը, սեղանի դիմաքարը, Ավետարանն ու պատկերները: Այն հեղվում է նաև Ջրօրհնյաց հանդեսի ժամանակ Հորդանան գետը խորհրդանշող ավապանի մեջ՝ ի հիշատակ մկրտությունից հետո Փրկչի վրա Սուրբ Հոգու իջման: Խաչերը, Ավետարանները և պատկերները առանց օծվելու չեն գործածվում, ոչ էլ կարող են համբույրի առարկա և օրհնության գործիք լինել: Նշենք նաև, որ այսպիսի օծումները հատուկ են միայն մեր Եկեղեցուն:

¹⁰ Մաշտոց, Վաղարշապատ, 1905, էջ 54-56:

¹¹ Կարապետ եպիսկոպոս տէր-Մկրտչեան, «Արթուր», 1912, էջ 784:

ՍՈՒՐԲ ՄՅՈՒՌՈՒՆԻ ՄԱՍԻՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՐԱՇԲՆԵՐ

Արքայույս Մյուռոնի ու Մյուռոնօրինության մասին մեզ են հասել մի շարք գեղեցիկ ավանդություններ և սքանչելի հրաշքներ: Ըստ հնագույն մի ձեռագրի¹², Թադեոս առաքյալի ձեռքով Հայաստան աշխարհ անուշաբույր յուղ բերելու մասին կա մի ավանդություն, համաձայն որի Մովսես մարգարեի պատրաստած անուշաբույր յուղը հարայելցիներն իրենց հետ տանում են Ավետյաց երկիր և պահում Երուսաղեմի տաճարում: Տաճարի կործանումից հետո, Եղիսաբեթը՝ Չաքարիա մարգարեի կինը, այն թաքցնում է ժայռի մեջ: Հովհաննես Մկրտիչը, ժողովրդին մկրտելիս, օծում է նաև այդ յուղով: Փրկչի նախակարապետի գլխատումից հետո սրբության յուղը վերցնում է Մարիամ Մագդաղենացին, որով էլ հետագայում օծում է Հիսուս Քրիստոսին: Իսկ երբ Քրիստոսի առաքյալները, Սուրբ Հոգու շնորհները ստանալուց հետո, մեկնում են աշխարհի չորս ծագերը՝ Ավետարանը քարոզելու, Թադեոս առաքյալը այդ յուղն իր հետ բերում է Հայաստան և թաքցնում ծառի մեջ: Տարիներ անց այդ տեղը տեսիլքով հայտնվում է Սուրբ Գրիգոր Լուսավորչին, ուր և Հայոց Հայրապետը կառուցում է Հովհաննես Կարապետի (Մկրտչի) անվամբ մի եկեղեցի:

Մեկ այլ ավանդության համաձայն, Ս. Մյուռոնը կապվում է Հիսուսի ձեռքով օրհնված ձիթայուղի հետ, որը Նրա Առաքյալներն իրենց հետ Հայաստան բերեցին¹³:

Բազմաթիվ են նաև Մյուռոնին վերաբերող հրաշքները: Արիստակես Լաստիվերցու վկայությամբ, Տրապիզոնում Պետրոս Գետադարձ կաթողիկոսը Բյուզանդիայի կայսեր Վասիլ Բ-ի կողմից հրաման է ստանում Աստվածահայտնության տոնի օրը մեծահանդես ջրօրհներ կատարել: Արարողության ընթացքում, երբ Հայոց Հայրապետը Սուրբ Մյուռոնը հեղում է ջրի մեջ. «Լույսի ճառագայթների ցնցուղ է փայլատակում շուրջը, որը տեսանելի է լինում ներկա բազմությանը»: Այս հրաշքին առնչվող ուշագրավ մանրամասներ կան Ուոհայեցու մոտ. «ոչ միայն աստիճանի լույս ցույց ջրի վրա, այլ մի պահ գետը կանգնեց, անշարժացավ, իբրև երկնային ապացույց հայ Մյուռոնի սրբության, որը հույները չընդունելով կամենում էին օրհնված ջուրը նորից օրհներ»:

ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Արքայույս Մյուռոնի նախատիպը, ինչպես արդեն նշեցինք, Հին Ուխտի նվիրական յուղն է, որի նյութերն էին պնուոսի ընտիր ծաղիկը, անուշ կինամոնը, անուշ խնկեղեգը, հիրիկը և ձիթայուղը: Այս նյութերն առավել կամ նվազ չափով մտնում են քրիստոնեական Մյուռոնի ընդունած յուղի բաղադրության մեջ¹⁴:

¹² Այս մասին տե՛ս «Էքմիածին», 1983, ԺԱ-ԺԲ, էջ 42:

¹³ Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Հայոց Եկեղեցին, Երևան, 1993, էջ 168:

¹⁴ Լոյս, 1906, էջ 1230 (Առթիվա, 1987), նաև տե՛ս Աստվածաշունչ, Ս. Էքմիածին, 1994, ԵԳ Լ 23-24:

Այսօր քրիստոնեական Եկեղեցիներում գոյություն ունի Մյուռոնի պատրաստման երկու եղանակ՝ պարզ և բաղադրյալ: Պարզի հիմքում ընկած է ձիթենու յուղը, բաղադրյալի՝ ձիթենու յուղ, բալասան և զանազան տեսակի համեմունքներ:

Հայ Եկեղեցում այն պատրաստվում է բաղադրյալ եղանակով: Մաքուր ձիթայուղին ավելացվում են բալասան և քառասունից ավելի անուշաբույր ծաղիկներ, խնկեղեններ, բույսերի արմատներ, ծաղկա-հյութեր և այլն:

Դիցուք տեղեկությունների պատճառով դժվար է կարծիք հայտնել այն մասին, թե մինչև ԺԳ դարը ի՞նչպիսին է եղել Մյուռոն-օրհնությունը, կամ քանի՞ տեսակի ծաղիկներ են գործածվել: Ըստ մեզ հասած ԺԴ դարի մի ձեռագիր Մաշտոցի, վստահաբար կարող ենք վկայել, որ ԺԴ դարից ցայսօր այն անփոփոխ է մնացել թե՛ պատրաստման և թե՛ օրհնության կարգով:

Մյուռոնի պատրաստման վերաբերյալ մանրամասն հրահանգներ կան Մաշտոցում, որով և առաջնորդվում են լուսարարապետները՝ մյուռոն պատրաստելիս:

Այդ յուղի պատրաստության մեջ կարևորագույն բաղադրիչներից մեկը բալասանն է: Այն մի փշտանման ծառի կեղևի տակից հոսող անուշաբույր հեղուկ է և բերվում է Խարայեից կամ Հնդկաստանից: Բալասանը լուծում են կտավատի ձեթի մեջ և եռացնում: Մեկ այլ կաթսայի մեջ եռացնում են ձիթենու յուղը և այդ երկուսը տաք վիճակում իրար խառնելով պահում են մինչև Մյուռոնօրհնության օրը: Մյուս նյութերն էլ մեծամասամբ բերվում են այդ նույն երկրներից: Դրանք պատրաստելու համար կաթսայի մեջ լցնում են յուղ ու գինի և ավելացնում են մյուս բոլոր նյութերը, բացի բալասանից: Կաթսան կափարիչով ամուր ծածկելով պահում են կրակի վրա մինչև եռալը: Այա երկու օր շարունակ եփում են թույլ կրակի վրա՝ մերթ ընդ մերթ խառնելով: Եփված զանգվածը երկու օրում պարզվելուց հետո մաքուր կտավներով քամում ու պահում են մինչև Մյուռոնօրհնության օրը:

Այս բոլոր գործողությունները կատարվում է լուսարարապետի ղեկավարությամբ հսկողության ներքո և մեծ բժախնդրությամբ, բարեպաշտական մթնոլորտում:

Ավանդաբար Մյուռոնօրհնության օրը խորհրդավոր արարողության ընթացքում կաթողիկոսի ձեռքով նոր Մյուռոնի մեջ հեղվում է մեկ կամ երկու լիտր հին Մյուռոն, որպեսզի հինը նորի հետ միշտ կապված մնա: Այդպես եղել է դարե դար: Դա մեր Եկեղեցու անբեկանելի շարունակականության խորհրդանիշն է, որ հոգևոր զորություն է պարգևում հավատքով նրան նայողներին:

Ս. ՄՅՈՒՌՈՐ ՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այս երանելի ու խնկելի Յուղն իր երկնային զորությունը ստանում է օրհնությամբ: Հայաստանյայց Սուրբ Եկեղեցում Ս. Մյուռոնի օրհնությունը վերապահված է կաթողիկոսին: Ըստ ավանդության Ս. Էջմիածնում առաջին Ս. Մյուռոնն օրհնել է Ս. Գրիգոր Լուսավորիչ հայրապետը: Մեր Եկեղեցու սովորության համաձայն, երբ

ամեն անգամ ձեռամբ կաթողիկոսի հին Մյուռոնը խառնվում է նորին, ապա նրա հետ հեղվում է նաև մեր Սուրբ Հայրապետի առաջին օրհնությունը: Երջանկահիշատակ Վաչգեն Ա Կաթողիկոսը Ս. Մյուռոնի օրհնության առթիվ արտասանած քարոզում ասում է. «Մենք հավատում ենք, որ այս օրհնված մյուռոնի ամեն մի կաթիլի մեջ շողում է մի ճառագայթ աստվածային փառաց լույսից, քանի որ ամեն անգամ նոր մյուռոնի մեջ խառնվում է հին մյուռոն: Ամեն նոր օրհնված մյուռոնի մեջ կա մի մասնիկ Սուրբ Գրիգոր Լուսավորչի օրհնած առաջին մյուռոնից»¹⁵:

Հայ Եկեղեցում Մյուռոնօրհնության պարբերականությունը սահմանող հատակ կանոններ չկան: Այն կատարվում է սովորաբար 5-7 տարին մեկ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով: Նախապես Ս. Մյուռոնն օրհնվել է Ավագ Հինգշաբթի օրը Ս. Պատարագի ընթացքում, որ է դարից հետո ընդունված էր նաև արևելյան եկեղեցիներում, սակայն հետագա դարերում, հանգամանքների բերումով, տեղափոխվել է պանապան եկեղեցական մեծ տոների՝ Հոգեգալստյան, Ս. Էջմիածնի, Վարուգա Սուրբ Խաչի, Խաչվերացի և այլն:

Վերջին ժամանակներում Հայ Եկեղեցում Մյուռոնօրհնությունը կատարվում է աշնանը Ս. Պատարագի արարողությունից հետո, Մայր Տաճարի դիմաց (արևմտյան կողմը) փայտյա գեղեցիկ բեմի վրա՝ ի տես հավատացյալ ժողովրդի:

ՄՅՈՒՌՈՆՕՐ ՀՆՈՒԹՅԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն կանոնի, Ս. Մյուռոնօրհնությունից քառասուն օր առաջ, ձիթենու մաքուր յուղով լի կաթսան դրվում է Մայր Տաճարի Ավագ Սեդանի վրա և ամեն օր, երեկոյան ժամերգության արարողությունից հետո, կատարվում է հատուկ պաշտոն՝ քարոզ, աղոթք, մաղթանք, շարական, իսկ վերջին օրը՝ երեկոյան, նաև՝ հսկման կարգ:

Մյուռոնօրհնության օրը, Ս. Պատարագից հետո, Մայր Տաճարի պանգերի քաղցրալուր դողանքների ներքո, Վեհարանից սկիզբ է առնում մեծաշուք թափորը: Սոջևից քայլում են կարմրապզեւտ շաթիրները՝ գավապանակիրները, որոնց հետևում են խաչվառակիրներն ու խաչակիրները, կերոնակիրներն ու քրոցակիրները, դպիրները, սարկավագները և հոգևորականները: Երկու սարկավագ կամ վարդապետ տանում են հայրապետական խորհրդանիշները՝ խաչը և գավապանը, ապա գայիս են տասներկու եպիսկոպոսներ հանդիսավոր ու շքեղ զգեստավորված՝ վեցը աջից և վեցը ձախից. «Ըստ Սուրբ Հոգու հիմնադրական շնորհաբաշխութեան աւանդող տասներկու առաքելոց»¹⁶: Նրանք տանում են Ս. Էջմիածնի թանկարժեք սրբությունները՝ արծաթապատ Ս. Ավետարանները, Սուրբ Մյուռոնի նյութերի սափորը, հին Մյուռոնով լի Մյուռոնադավնին, Ս. Կենաց Փայտը, Աստվածամուխ Գեղարդը, Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը, Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի Աջը և այլ սրբություններ:

¹⁵ «Էջմիածին», 1983, ԺԱ-ԺԲ, էջ 42:

¹⁶ Արշակ Տէր Միքելեան, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Բրիտանեականը, Տիֆլիս, 1900, էջ 376:

Հայրապետական ամպիոփանու ներքո գալիս է Վեհափառ Հայրապետը՝ Պատարագչի շքեղ հանդերձներով զգեստավորված, Հայրապետական խաչն ու գավապանը ձեռքին: Հայրապետի առջևից տարվում է Հայրապետական քողը: Չույզ բուրվառակիրներ՝ սարկավագ կամ վարդապետ, անընդհատ համաչափ խնկարկում են Վեհափառ Հայրապետին: Թափորը մոտենում է քեմին, և Վեհափառ Հայրապետը տասներկու եպիսկոպոսների ու արարողության մյուս մասնակիցների հետ բարձրանում է վեր, որից անմիջապես հետո սկսվում է Մյուռոնօրհնության խորհրդավոր կարգը:

Նախ՝ եպիսկոպոսները կարդում են Սուրբ Գրային ընթերցվածներ, այնուհետև Վեհափառ Հայրապետը կարդում է հոգեբուխ աղոթքներ, որոնք երբեմն երբեմն ընդհատվում են մեղմանուշ շարականներով, սաղմոսերգություններով և օրհներգություններով:

Լուսարարապետը, դպիրների երգեցողության ներքո, որոնք երգում են «Բացեր, տէ՛ր, այսօր գանձդ երկնային» սքանչելի շարականը, վերցնում է կաթսայի կափարիչը: Որից հետո Վեհափառը «Սոաքելոյ աղաւնոյ» շարականը երգելով մյուռոնաբույր կաթսայի մեջ հեղում է ծաղիկների հյութը, բալասանը և հին Մյուռոնը: Եվ Ս. Գրիգոր Լուսավորչի օրհնաբեր Աջով տյառնագրում է սրբալույս Մյուռոնը՝ երեք անգամ երգելով. «Օրհնեսցի՛ և սրբեսցի Մեռոնս այս նշանաւ սուրբ խաչիս, և սուրբ Աւետարանաւս, և սուրբ Աջիւս, և աւուրս շնորհիւ անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»¹⁷: Տյառնագրում է նաև մյուս սրբություններով, ապա մյուռոնաբույր կաթսան փակվում է կափարիչով ու յոթ շղարջներով: Չիթայուղը, բալասանը, ծաղկի հյութն ու հին Մյուռոնը իրար են խառնվում և Աստծո Ամենասուրբ Հոգու զորության ներգործությամբ դառնում. «Իդ ցնծութեան, զգեստ լուսաւոր, օծումն թագաւորութեան, սրբութիւն հոգւոց և մարմնոց, շնորհք հոգևորական, պահապան կենաց, կնիք արդարութեան, պէն հաւատոյ, նահատակ յաղթող ընդդէմ ամենայն գործոց բանասրկութիւն, ոգւոց փրկութիւն, ցնծութիւն սրտից, ուրախութիւն յաւիտենական»¹⁸:

Վեհափառ Հայրապետի գոհաբանական մի քանի աղոթքներով, Ավետարանով ու «Պահպանիչ»-ով ավարտվում է Մյուռոնօրհնության խորախորհուրդ ու սրբական արարողությունը:

Սրբապան արարողության ավարտից հետո նախ՝ հոգևորականները, ապա և հավատացյալ ժողովուրդը մոտենում և համբուրում են մյուռոնի կաթսան:

ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ 19-20-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Միշտ էլ շնորհաբաշխ Մյուռոնօրհնության հանդեսները Մայր Աթոռում մեծ շուքով ու խանդավառությամբ են կատարվել: 19-րդ դարում Գևորգ Դ կաթողիկոսից սկսած Սրբալույս Մյուռոնի շնորհաբաշխ հանդեսը կատարվել է յոթ անգամ: Գևորգ Դ կաթողիկոսի

¹⁷ «Կառնո օրհնութեան սրբալույս մեռոնին», Վաղարշապատ, 1890, էջ 28:

¹⁸ «Կառնո օրհնութեան սրբալույս մեռոնին», Վաղարշապատ, 1876, էջ 16-17:

օրոք Ս. Մյուտոնն օրհնվել է չորս անգամ՝ 1868, 1872, 1878, 1882 թվականներին: Մակար կաթողիկոսի օրոք երկու անգամ՝ 1886, 1890 թվ., Մկրտիչ Ա հրկմյանի օրոք՝ մեկ անգամ 1897 թ.:

Այդ օրերին Սուրբ Էջմիածնում էին գտնվում բազմահազար ուխտավորներ, ինչպես Արևմտյան և Արևելյան Հայաստանի գավառներից ու նահանգներից, այնպես էլ աշխարհի չորս ժազերից՝ մասնակցելու այդ հոգևոր տոնախմբությանը: «Ուխտաւորաց բազմութիւնն շատ մեծ էր: Թէն դժուար է թիւր ճշտութեամբ որոշելը, բայց ըստ երևոյթին նա պէտք է 20000-ից անելի լինէր: Ոչ միայն Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի հայ հասարակութիւնք ունէին իրանց ներկայացուցիչներն այստեղ, այլև Ռումանիայից, Բուլղարիայից և Ջաւայ կղզուց էլ կային ներկայացուցիչք հայ գաղթականութեանց»¹⁹:

Եկեղեցու բարձրագույն իշխանության նախաձեռնությամբ Ս. Էջմիածնի տաճարի և Գևորգյան ձեմարանի շրջակայքում հատուկ վրաններ էին կանգնեցված ուխտավորների համար. «Հայ ազգութիւնն հեղեղի նման թափել էր Մայր Աթոռ: Մայր Աթոռի հիւրատունն, միաբանութեան նոր շինութեան սենեակների մի մասը և մօտ քառասուն պինուրական վրաններ միայն ունէր հիւրընկալ մասնաժողովր, որոնք հարկաւ բաւական չէին բոլոր հիւրերին ներս ընդունելու. ուստի և բազմաթիւ ուխտաւորներ, ինչպէս և միշտ, հարկադրուած էին տեղաւորուել Վաղարշապատ գիւղում և կամ մնալ բացօթեայ»²⁰: Երեք օր ու գիշեր ուխտավոր ժողովուրդը հոգևոր ցնծության մեջ է եղել, որը վերածվել է համաժողովրդական տոնախմբության: Այդ տոնական ուրախ օրերին իրար են ընդելուզվել փառաբանական աղոթքները և ժողովրդական երգն ու պարը. «Այդ երեկոյ հրաւառութիւն կար Վանքի քակում և ձեմարանում: Նուագում էին պինուրները, որոնց հետ մրցում էին աշուղները իրենց ազգային ժողովրդական երգերով»²¹: Հանդիսության ավարտից հետո էլ չդադարեց ուխտագնացությունը. «Սմեն օր շրջակայ տեղերից նոր նոր ուխտաւորներ են գալիս կանաչ Միտոնի կաթսան համրուելու»²²: Սա այն կաթսան է, որը «Հայ հավատացյալ և հայրենասեր ժողովրդի մեռոնաքոյր սիրտն է, ուր հայ հավատքն ու հոգին, հայ կյանքը ընդհանրապես, օրհնվում, շատանում է և իբր մասունք բաշխվում բոլոր ժամանակների հայության»²³:

Ցավով պետք է նշել, որ խորհրդային իշխանության սկզբնական տարիներին այս ավանդույթը կորցրեց իր երբեմնի փայլքն ու շքեղությունը:

Քսաներորդ դարում Ս. Էջմիածնում Աստուծո նախախնամությամբ և մեր իմաստուն հայրապետների օրհնությամբ ինն անգամ «Արքայույս Մեռոնի կաթսայի առաջ իրար են հանդիպել մեր պապերի,

¹⁹ «Արարատ», 1890, էջ 585:

²⁰ «Արարատ», 1897 Ը-Ժ, էջ 389:

²¹ ԱՅԴ, էջ 390:

²² ԱՅԴ, էջ 390:

²³ «Էջմիածին», 1955 Ը, էջ 20:

մեր նահատակների, մեր հայրապետների հոգիները, մեր անցյալն ու ներկան իրար են գրկել, իրարմով ամրողջանալու, զորանալու և բարձրանալու համար»²⁴:

Դարասկզբին՝ 1903 թվականին, առաջին անգամ Մայր Աթոռում Ս. Մյուռոնի շնորհաբաշխ օրհնությունը կատարել է Մկրտիչ Ա Սրբիմյան կաթողիկոսը: Ապա երկու անգամ՝ 1912 և 1926 թվականներին օրհնել է Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը: Վազգեն Ա Երևանաբար կաթողիկոսն իր շուրջ չորս տասնամյակ տևած գահակալության ընթացքում Ս. Մյուռոնն օրհնել է վեց անգամ՝ 1955, 1962, 1969, 1976, 1983, 1991 թվականներին:

Ի դեպ, Վազգեն Ա երջանկահիշատակ կաթողիկոսը մեր այն սակավաթիվ երջանիկ հայրապետներից մեկն է, որ իր հոգնատանը աչքերով տեսավ հայոց հայրապետների դարավոր երապանքը՝ Հայաստանի անկախությունը և այն օրհնեց հայրաբար: 1991 թվականի Ս. Մյուռոն-օրհնության ժամանակ իրականացավ համայն հայության ևս մեկ քաղաքացի. Ս. Էջմիածնում Ս. Մյուռոնն օրհնվեց երկու շնորհապարդ կաթողիկոսների՝ Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ի մասնակցությամբ, որը հավերժ կմնա Հայ Եկեղեցու պատմության էջերում: Ի նշան եղբայրական սիրո և միության Գարեգին Բ կաթողիկոսն իր հետ Անթիլիասից բերել էր Կիլիկիո Աթոռի Սրբալույս Մյուռոն, որը հեղվեց Ս. Էջմիածնի մյուռոնաբույր կաթսայի մեջ: Ամենայն Հայոց Ծերունապարդ Հայրապետը՝ մխթարված սրտով, այդ տարվա Ս. Մյուռոնը հռչակելով անկախության և միության Մյուռոն, հավատացյալ ժողովրդին ուղղեց հետևյալ իմաստուն պատգամը. «Մեր նոր ինքնիշխան պետութեան անկախութեան հիմքերից մեկն է նաև հայ ազգի Եկեղեցու անկախությունը և ինքնիշխանությունը: Մենք դառնում ենք Հաւատամքը՝ մէկ ապատ ազգութիւն, մէկ անկախ պետութիւն, մէկ անկախ ազգային Եկեղեցի: Այս հաւատամքով, այս գիտակցութեամբ, Սուրբ Հոգու պօրութեամբ օրհնուած այս սրբալոյս միռոնը Մենք հռչակում ենք անկախութեան միռոն»²⁵: Ապա հայրաբար հրավիրեց. «Հայեր, հոգևոր պաւակներ Մեր, այս սրբապան միռոնով՝ միացէ՛ք, եղբայրացէ՛ք, եղէք մէ՛կ կամք, եղէք մէ՛կ ուրախութիւն, եղէք մէ՛կ ցաւ: Եղէք մէ՛կ ազգ, մէ՛կ ընտանիք, մէ՛կ ժայռացած երդում և հաւատացէք մեր այս մի բուռ հայրենի հողին ու նրա գալիքին, սուրբգրական Արարատի հայեացքի տակ, Սուրբ Էջմիածնի օրհնութեան ներքոյ»²⁶:

Այսօր Ս. Լուսավորչի Աթոռի 131-րդ գահակալն է Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը, որն իր եռանդուն ազգաշեն գործունեությամբ և եկեղեցանվեր հովվապետական այցելություններով հոգևոր մի նոր վերանորոգություն է առաջ բերել թե՛ Մայր Աթոռում, և թե՛ ներքին ու արտաքին թեմերում: Կամոքն Աստուծո այս տարի սեպտեմբերի 8-ին, նորընտիր հայրապետի հրամանով, ըստ կանոնաց և կարգաց մեր Սուրբ Եկեղեցվո, պետք է տեղի ունենա Ս.

²⁴ «Էջմիածին», 1955, Ը, էջ 20:

²⁵ «Էջմիածին», 1991, Թ-Ժ, էջ 17:

²⁶ «Էջմիածին», 1991, Թ-Ժ, էջ 17:

Մյուսոնի ի դարի վերջին օրհնությունը: Ս. Էջմիածնից, որ «Հայոց ազգի Աթոռն է և Քրիստոսի յատուկ սիրելին»²⁷ Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնությամբ նորից պիտի բխի կենաց շնորհաբաշխ Յուդը ի փառս Աստուծո, ի պայծառություն եկեղեցվո և ի յոռոգումն ժողովրդյան: Եվ մենք լիահոյս ենք, որ համայն հայությունը ինչպես միշտ այս անգամ ևս մեծ խանդավառությամբ ու սիրով կմասնակցի այդ երկնառաջ շնորհաբաշխությանը:

«Օրհնէ՛ մեզ, Տէ՛ր,

Այս սուրբ իւղով

Ու Քու ահաւոր, լուսաւոր,

Երկնաւոր, վարմանաւոր,

Անձառ փառքերու զովեստին համար

Մաքրակրօններու բուրվառով խնկուած,

Սուրբ, սուրբ, անքնին, անպատում,

Բարձրեալ, ողորմած, զերերգուած,

Ճշմարիտ բարերար եւ սուրբ անունդ

Ասո՛վ ըրէ՛ մեզի փրկութիւն:

Տո՛ւր նաեւ քաւութիւն,

Պարգեւէ՛ բժշկութիւն,

Պատրաստէ՛ շնորհք,

Առատաձեռնէ՛ երջանկութիւն,

Երկնատեղաց լոյսի պէս,

Չէթին օծումէն վերջը,

Թող ալ անարատ մնամ

Իմ իւղուած այս բանական հիւստածքին մէջ.

Ալ թող չմտնէ

Եւ հոն տեղ չգտնէ բնաւ

Մեղքին աղտը.

Ու չջաղախէ բնաւ

Հոգիիս կերպարանքը.

Անոնք որ կ'օծուին այս իւղով

Թող հարսի պէս պճնուին,

Գեղեցիկ վայելչութեամբ

Եւ իբրեւ երջանիկ հոգիներ պարդարուին:

.....

Անո՛վ տոչորուինք,

Անո՛վ պարուրուինք,

Անո՛վ լուսաւորուինք,

Անո՛վ արդարանանք,

Անո՛վ ապնուանանք,

Անո՛վ պսակուինք,

Անո՛վ թագաւորենք...»:

Որովհետեւ՝

Միւսոնուած ժողովուրդ ենք եւ միւսոնելի առաքելութիւն ունինք:

²⁷ «Էջմիածին», 1978, Բ, էջ 28:

Լսէ՛ մեր ժայնը ո՛վ միտոնի աղբիւր, Տէ՛ր երկնաւոր:

«Դու իսկ ես մեռոն

Ամբիժ, մաքուր անաղարտ

Որ հանապազ բուրեւ յանձինս մեր

Եւ սրբոց քոց»:

Լսէ՛ միտոնիդ ժայնը մեր միտոնեալ հոգիներէն, Տէ՛ր երկնաւոր եւ
Աստուած հարցն մերոց²⁸:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՔԱՂՎԱԾ ԵՐԶԱՆԿԱՎՈՐՈՒՄՍԿԻ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱՅՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈՉՆԵՐԻՅ

Սուրբ խորհուրդներու կատարման ընթացքին Սրբալույս Մեռոնը կ՝աւանդուի
այն աղբյուրներէն մեկը, ուրկէ կրխի մեզի համար այդ ոգեկան լույսը: Աստու
համար է, որ մեր ժողովուրդը այս սրբացած յուղը կկոչէ Սրբալույս Մեռոն:

Սիրելի հավատացյալներ, Տիրոջ ողորմութեամբ, մեր սրբազան եղբայրներու և
ձեզի հետ միասին աղոթելով, մեր խնդրվածքները բարձրացուցինք այս սուրբ և
անմահ Տաճարի կամարներէն դեպի երկինք, որպէսզի աստվածային շնորհները,
աստվածային զորութիւնը և լույսը իջնեն այս Մեռոնին մեջ և այն դառնա
Աստուծո ձեռքով օրհնված, Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով օրհնված Սրբալույս
Մեռոն, որով պիտի դրոշմվին մեր ժողովուրդի բոլոր նորածին զավակները և
պիտի դառնան քրիստոնյաներ, պիտի դառնան հայ քրիստոնյաներ:

Ի սփյուռս աշխարհի ցրված մեր ժողովուրդը այսօր մեր Ս. Եկեղեցիով կա և
կմնա մեկ և ամբաժան և այս Ս. Մեռոնը լույսի այն աղբյուրն է և այն լուսեղեն
կապը, որով կմիավորվի հոգեպէս հայ հավատացյալ ժողովուրդը:

Մեր ժողովուրդը հավատում է Սրբալույս Մեռոնի շնորհատու զորութեամբ, թե
Սուրբ Մեռոնի միջնորդութեամբ Սուրբ Հոգին բաշխում է մեր ազգի զավակներին
իր շնորհները, այսինքն՝ լույսը գիտակցության, ճառագայթը հանճարի և
առաքինութիւնները բարոյական, որոնցով զարդարված են մեր ժողովրդի
հոգիները տակալին այն օրերից, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչը, հենց այստեղ
երկի, առաջին անգամ սուրբ մեռոն օրհնեց, և այդ օրերից սկսեց բաշխվել այն:

²⁸ Գարեգին Բ Կաթողիկոս, Հոգ, մարդ եւ գիր, Անթիքիս, 1991, էջ 177:



Մեր ժողովուրդը հավատում է մահ, վերջապես, Սրբալույս Մեռոնի խաղաղարար զորությանը: Սուրբ Մեռոնի միջոցով Սուրբ Հոգվո շնորհների քաշխումով հայ հավատացյալների հոգիները խաղաղվում են, աճում է սերը և եղբայրական ոգին նույն ժողովրդի զավակների միջև, և առհասարակ մարդկանց միջև:



Մենք հավատում ենք, որ այս օրհնված Մյուռոնի ամեն մի կաթիլի մեջ շողում է մի ճառագայթ աստվածային փառաց լույսից, քանի որ ամեն անգամ նոր մյուռոնի մեջ խառնվում է հին մյուռոն: Ամեն նոր օրհնված մյուռոնի մեջ կա մի մասնիկ Սուրբ Գրիգոր Լուսավոչի օրհնած առաջին մյուռոնից:



Մեր նոր ինքնիշխան պետության անկախութեան հիմքերից մէկն է մահ հայ ազգի եկեղեցու անկախութիւնը և ինքնիշխանութիւնը:

Մենք դաւանում ենք Հաւատամքը՝ մէկ ազատ ազգութիւն,

մէկ անկախ պետութիւն,

մէկ անկախ ազգային եկեղեցի:

Այս հաւատամքով, այս գիտակցութեամբ, Սուրբ Հոգու զօրութեամբ օրհնուած այս սրբալույս միւռոնը Մենք հռչակում ենք անկախութեան միւռոն:



Հայեր, հոգևոր զաւակներ Մեր, այս սրբազան միւռոնով՝ միացէ՛ք, եղբայրացէ՛ք, եղէք մէկ կամք, եղէք մէկ ուրախութիւն, եղէք մէկ ցաւ: Եղէք մէկ ազգ, մէկ ընտանիք, մէկ ժայռացած երդում և հաւատացեք մեր այս մի թուռ հայրենի հողին ու նրա գայիքին, սուրբգրական Արարատի հայեացքի տակ, Սուրբ Էջմիածնի օրհնութեան ներքոյ:

